ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – ՀՈՒՆԻՍ, 2021թ.

WORLD BANK GROUP
Macroeconomics, Trade & Investment

- *Ապրիլին արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (այսուհետ՝ ՆՏՆԺՀ) աճեցին 23 տոկոսով մասամբ այն պատճառով, որ 2020թ. ապրիլին ակտիվության բազան ցածր էր՝ պայմանավորված «ՔՈՎԻԴ-19»-ից բխող սահմանափակումներով:*
- *«ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի թիվն ընկավ, բայց պատվաստումների տեմպը դեռևս ցածր է:*
- *Սննդամթերքի գներում գնաճի ավելի ցածր մակարդակի շնորհիվ մայիսին գնաճը չափավորվեց՝ ՆՏՆԺՀ կազմելով 5.9 տոկոս:*
- *Արտահանման և ներկրման ծավալների վերականգնման տեմպերն ամրապնդվեցին ապրիլին:*
- *Պետական եկամուտների հավաքագրման մակարդակի ամուր աճի շնորհիվ ապրիլին բյուջեն հավելուրդ արձանագրեց:*
- *Ապրիլին բանկային հատվածում միջնորդական ծառայությունների կատարողականը մնաց թույլ, իսկ շահութաբերությունը՝ ընկավ:*

Հայաստանի տնտեսությունը վերականգնվում է: 2021թ. 1-ին եռամսյակում ՆՏՆԺՀ ՀՆԱ-ն կրճատվեց 3.3 տոկոսով, ինչը բարելավում է նախորդ եռամսյակում ՆՏՆԺՀ գրանցված 8.7 տոկոսով անկման համեմատ: 2020թ. մասնավոր սպառման ծավալների 14 տոկոսով նվազումից հետո 2021թ. 1-ին եռամսյակում նույն ցուցանիշի կրճատման տեմպը թուլացավ՝ կազմելով 3 տոկոս: Սա պայմանավորված էր սահմանափակումների վերացմամբ, 2020թ. լարված իրավիճակից հետո ընդհանուր տրամադրությունների բարելավմամբ և օտարերկրյա զուտ տրանսֆերտների ծավալի վերականգնմամբ: Մասնավոր սպառման կրճատման վրա չեզոքացնող ազդեցություն ունեցավ 2021թ. 1-ին եռամսյակում ՆՏՆԺՀ պետական սպառման 12 տոկոսի աճը: Չնայած հիմնական միջոցներում ներդրումների չափավոր աճին (ՆՏՆԺՀ 4.2 տոկոս)՝ համախառն կապիտալի ձևավորման ծավալը ՆՏՆԺՀ կրճատվեց 33 տոկոսով, ինչը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է պաշարների նվազմամբ: Զուտ արտահանումը դրական ազդեց ՀՆԱ-ի աճի վրա, ընդ որում, ներկրման համեմատ արտահանումն արձանագրեց աճի ավելի բարձր տեմպ:

Վերականգնման տեմպերն ուժեղացան ապրիլին, երբ տնտեսական ակտիվության ցուցիչը (ՏԱՑ) ՆՏՆԺՀ աճեց 23 տոկոսով: Այս շեշտակի աճը պայմանավորված էր ցածր բազայով, քանի որ 2020թ. ապրիլի ողջ ընթացքում գործում էր ամբողջական սահմանափակումները, սակայն կարևոր է արձանագրել, որ ՏԱՑ-ը գերազանցեց 2019թ. ապրիլի մակարդակները: Բարձր երկնիշ աճ արձանագրվեց ՏԱՑ-ում ներկայացված բոլոր ոլորտներում, որտեղ առաջատարն էր շինարարությունը (87 տոկոս), որին հաջորդել է արտադրությունը (22 տոկոս), որը 2020թ. փետրվարից հետո առաջին անգամ աճ գրանցեց: Ծառայությունների (չհաշված առևտուրը) և հանքարդյունաբերության աճն ավելի չափավոր էր և ՆՏՆԺՀ կազմեց համապատասխանաբար 15 և 11 տոկոս: Կուտակային արտահայտությամբ ՏԱՑ-ը թևակոխեց աճի շրջան՝ 2021թ. 1-ին չորս ամիսներին ավելանալով 2.6 տոկոսով:

Տնտեսության վերականգնումը, հավանաբար, կշարունակվի, քանի որ «ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի թիվը նվազում է: Մինչև ապրիլի կեսերը շարժունակության ցուցիչը հասավ նախաքովիդյան մակարդակների 90 տոկոսին, և այս ցուցանիշը պահպանվեց մինչև հունիսի սկիզբը: Հունիսի սկզբին Հայաստանից մեկնող թռիչքների միջին թիվը աճեց 18-վ՝ մայիսին և ապրիլին գրանցված համապատասխանաբար 16 և 14 միջին ցուցանիշների համեմատ: «ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի թիվը, որն ապրիլի կեսերին հասավ իր գագաթնակետին, շարունակեց ընկնել: Այսպես, վարակման օրական գրանցման դեպքերի թիվը սկսեց կայուն նվազել: Ապրիլի 2-րդ շաբաթում գրանցված առավելագույն մակարդակի (օրական ավելի քան 1,000 դեպք) համեմատ հունիսի առաջին շաբաթում օրական դեպքերի թիվը 100-ից ցածր էր, իսկ դրական տեստերի մասնաբաժինը նույն ժամանակաշրջանում ընկավ՝ 20 տոկոսից դառնալով 3 տոկոս: Պատվաստումների տեմպը մինչ օրս ցածր է, և հունիսի 6-ի դրությամբ բնակչության ընդամենը 1.6 տոկոսն է անցել առնվազն 1 ներարկում:

Ապրիլին գրանցված 6.2 տոկոսի համեմատ մայիսին գնաճը չափավորվեց՝ կազմելով 5.9 տոկոս: Ամեն դեպքում, սա գերազանցել է ՀՀ Կենտրոնական բանկի նպատակային միջակայքը: Գնաճի նվազումը պայմանավորված էր պարենի և ոչ ալկոհոլային ըմպելիքների գների անկմամբ (ապրիլին գրանցված 8.3 տոկոսի համեմատ 7.5 տոկոս մայիսին), նույնիսկ տրանսպորտի, հագուստի և հյուրընկալության ծառայությունների գների շարունակական աճի պայմաններում:

Ապրանքների արտաքին առևտրի ծավալներն աճեցին 48 տոկոսով ապրիլին: Արտահանումը ՆՏՆԺՀ կտրուկ մեծացավ 66 տոկոսով, և այս աճը կիսով չափ պայմանավորված էր օգտակար հանածոների (պղնձի) և թանկարժեք քարերի արտահանման մեծացմամբ: ՆՏՆԺՀ ներկրման ծավալներն աճեցին 39 տոկոսով, ինչին աջակցեց ներքին պահանջարկի վերականգնումը: Առաջին չորս ամիսներին արտահանումը և ներկրումը կուտակային արտահայտությամբ համապատասխանաբար աճեցին 17 և 2 տոկոսով՝ վկայելով առևտրային մնացորդի բարելավման (14 տոկոսով) մասին:

Դրամը համեմատաբար կայուն էր մայիսին: Մինչև հունիսի 6-ը ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեզրկումն աննշան էր (0.3 տոկոսով)՝ համեմատած նախորդ ամսվա հետ: Սա արտացոլեց առևտրային ավելի ցածր դեֆիցիտը, ապրիլից ժամանող զբոսաշրջիկների թվի փոքր-ինչ աճը և արտերկրից զուտ տրանսֆերտների եռապատիկ աճը: Ինչևէ, զբոսաշրջությունը նախաքովիդյան մակարդակների համեմատ դեռևս շատ ցածր է. 2021թ. առաջին եռամսյակում ժամանող զբոսաշրջիկների թիվը 72 տոկոսով ցածր էր 2020թ. նույն եռամսյակի համեմատ: Միջազգային պահուստները փոքր-ինչ աճեցին մայիսին՝ կազմելով 3 մլրդ ԱՄՆ դոլար և ապահովելով 7 ամսվա ծածկույթ ապրանքների ներկրման համար:

Մարտին գրանցված 47 մլրդ դրամի դեֆիցիտի համեմատ ապրիլին բյուջեն ունեցավ 3 մլրդ դրամի հավելուրդ: Սրա արդյունքում 2021թ. առաջին չորս ամիսների կտրվածքով դեֆիցիտը դարձավ 52 մլրդ դրամ (կազմելով կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.8 տոկոսը): Հավելուրդը պայմանավորված էր պետական եկամուտների շեշտակի աճով (ՆՏՆԺՀ 21 տոկոս), որտեղ սպառման ծավալների վերականգնման պայմաններում ԱԱՀ-ի հավաքագրված գումարներն աճեցին 26 տոկոսով: Բացի այդ, «Քովիդ»-ին արձագանքման միջոցառումների շրջանակում 2020թ.-ից հետաձգված շահութահարկի գծով պարտավորությունների կատարումը ապահովեց եկամուտների աճի կեսը: Ապրիլին ՆՏՆԺՀ ծախսերն աճեցին 5 տոկոսով՝ հենվելով արդեն իսկ բարձր բազայի վրա (2020թ. ապրիլին ծախսերը ՆՏՆԺՀ աճել էին 40 տոկոսով), ընդ որում, աճի համանման տեմպեր են արձանագրվել կապիտալ և ընթացիկ ծախսերում:

Ապրիլին բանկային հատվածում միջնորդական ծառայությունների կատարողականը թույլ էր, իսկ շահութաբերությունը վատթարացավ: Վարկերն ու

ավանդները (ճշգրտված փոխարժեքային փոփոխություններով) նախորդ ամսվա համեմատ ապրիլին մնացել են անփոփոխ, բայց ՆՏՆԺՀ համապատասխանաբար աճել են 5 և 4 տոկոսով: Չաշխատող վարկերի ծավալը կրճատվեց երկրորդ ամիսը շարունակաբար, թեև դրանց ցուցանիշը (7.1 տոկոս) բավականին բարձր է: Կապիտալի համարժեքության ցուցանիշը պահպանեց իր հուսալի մակարդակը՝ 16.8 տոկոս, որը նվազագույն 12 տոկոս շեմից բարձր է: Շահութաբերության ցուցանիշներն ընկան, քանի որ պորտֆելի թուլացման պայմաններում բանկերը մեծացրեցին պահուստավորման մակարդակը:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվությունը շեշտակի աճեց ապրիլին

(Տնտեսական ակտիվության ցուցիչ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Գնաճը մղմվեց մայիսին, սակայն շարունակեց գերազանցել ՀՀ ԿԲ-ի նպատակային միջակայքը

(ՍԳՑ գնաճ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. 2021թ. ներկրման համեմատ արտահանման ավելի արագ աճի պայմաններում առևտրային դեֆիցիտը նեղացավ

(մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 4. Չնայած ապրիլին եկամուտների ամուր կատարողականին՝ առաջին չորս ամիսներին բյուջեն պակասուրդ գրանցեց

(մլրդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ՀՀ ՖՆ

Գծապատկեր 5. Միջազգային պահուստները փոքր-ինչ աճեցին մայիսին և ապահովեցին 7 ամսվա ներկրումային ծածկույթ

(մլն ԱՄՆ դոլար) (ամիս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Մայիսին դրամը կայուն էր ԱՄՆ դոլարի նկատմամբ

(ցուցիչ, 2020թ. մարտի 2=100)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ